

«ՎԱԼԼԵՏՏԱ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական հաշվետվություն

2006թ, 2005թ և 2004թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

հաշվեփակված տարիների Ֆինանսական

հաշվետվությունների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

Մայիս 2007թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Հաշվապահական հաշվեկշիռ	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	13

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 21

*«Վալլետտա» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության 2006թ, 2005թ և 2004թ. ֆինանսական
հաշվետվությունների վերաբերյալ*

Ներկայացվում է «Վալլետտա» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Վալլետտա» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2006թ, 2005թ և
2004թ ղեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռները, նույն ամսաթվերին
ավարտված տարիների ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում
փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես
նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության
Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների համաձայն ֆինանսական
հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ
պատասխանատվությունը ներառում է էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական
հաշվետվությունների կազմումը, խարդախությունների և սխալների կանխման նպատակով
համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակումը և կիրառումը,
համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և
կիրառումը, ինչպես նաև համապատասխան հիմնավորված գնահատումների իրականացումը:

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա կարծիք
հայտնել ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր կողմից
աուդիտն իրականացվել է Աուդիտի Միջազգային Ստանդարտների համապատասխան: Այդ
ստանդարտները պահանջում են պահպանել էթիկայի կանոնները, պլանավորել և
իրականացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից
զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքներն ընդգրկում են ֆինանսական հաշվետվություններում ու
համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող
փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված
է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում
էական անճշտությունների ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:
Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան
ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման
համար կիրառվող

ներքին վերահսկողության համակարգի գնահատման և ոչ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքներն ընդգրկում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված համապատասխան աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2006թ,2005թ և 2004թ ղեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

17 մայիսի 2007թ.

Մ. Ղազարյան
«ՍՕՍ Աուդիտ» ՍՊԸ տնօրեն

Վ.Չիլինգարյան
Աուդիտոր

ՎԱԼԼԵՏՍԱ ՍՊԸ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

2006թ., 2005թ. և 2004թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար դրամ

	Ծանոթ.	31.12.06թ.	31.12.05թ.	31.12.04թ.
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	149,857	173,877	74,975
Ոչ նյութական ակտիվներ	6	2,596	2,834	2,151
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		115,649	633,642	552,365
Կանխավճարներ նվազագույն շահութահարկի գծով		4,262	577,526	552,365
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ	5	87,786	56,116	-
		268,102	810,353	629,491
Ընթացիկ ակտիվներ				
Նյութեր		223,188	176,432	153,802
Արագամաշ առարկաներ		513	170	8,044
Ապրանքներ		394,143	871,222	549,487
Տրված ընթացիկ կանխավճարներ		14,865	40,576	22,508
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	7	591,428	240,501	571,926
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	8	154,565	139,530	151,918
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		4,233	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		381,244	56,375	4,970
Այլ ընթացիկ ակտիվներ	9	1,142,968	608,120	2,402
		2,907,147	2,132,926	1,465,057
Ընդամենը ակտիվներ				
		3,175,249	2,943,279	2,094,548
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Կապիտալ և պահուստներ				
Կանոնադրական կապիտալ		518,400	603,840	60,000
Կուտակված շահույթ		385,026	299,716	174,007
Պահուստային կապիտալ		132,165	132,165	-
		1,035,591	1,035,721	234,007
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		1,112,460	1,161,670	449,686
		1,112,460	1,161,670	449,686
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր		400,348	370,351	251,274
Կարճաժամկետ փոխառություններ		-	98,200	143,762
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	10	529,424	248,319	969,072
Ստացված ընթացիկ կանխավճարներ		77,053	9,565	7,787
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	11	4,013	7,520	2,812
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. վճարների գծով		3,398	81	372
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով		12,962	11,852	1,132
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-	34,644
		1,027,198	745,888	1,410,855
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ				
		3,175,249	2,943,279	2,094,548

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2007թ. մարտի 31-ին: Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Շ. Ստեփանյան

Կ. Սամսոնյան

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

ՎԱԼԼԵՏՍԱ ՄՈԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006թ., 2005թ. և 2004թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

հաշվեփակված տարիների համար

	Ծան.	2006թ.	2005թ.	Հազար դրամ 2004թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթ		4,132,690	3,724,749	3,748,104
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ինքնարժեք		(3,524,767)	(3,287,095)	(3,472,719)
Համախառն շահույթ/(վնաս)		607,923	437,654	275,385
Իրացման ծախսեր		(288,355)	(203,059)	(88,464)
Վարչական ծախսեր		(121,827)	(161,426)	(175,225)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից շահույթ/(վնաս)		197,741	73,169	11,696
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում.		22,514	3,511	4,959
Արտարժույթի փոխարկման գծով եկամուտներ		-	-	4,959
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում.		(49,076)	(39,991)	(24,993)
Հարկային մարմինների կողմից ստուգման ակտով արձանագրված		(45,859)	(32,864)	(21,408)
Գործառնական շահույթ/(վնաս)		171,179	36,689	(8,338)
Ֆինանսական ծախսեր		(226,626)	(153,946)	(63,207)
Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս), այդ թվում.	13	453,502	423,591	239,022
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		428,359	252,876	235,627
Սովորական գործունեությունից շահույթ/(վնաս)		398,055	306,334	167,477
Զուտ շահույթ/(վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը		398,055	306,334	167,477
Շահութահարկի գծով ծախս	14	(13,029)	(6,651)	(4,497)
Զուտ շահույթ/(վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո		385,026	299,683	162,980

ՎԱԼԼԵՏՏԱ ՄՊԸ

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006թ., 2005թ. և 2004թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

հաշվեփակված տարիների համար

	Կանոնադրական կապիտալ			Պահուստային կապիտալ	Էմիսիոն եկամուտ (վնաս)	Կուտակված շահույթ	Հազար դրամ Ընդամենը
	Կանոնադր. կապիտալ	Զվճարված կապիտալ	Զուտ գումարը				
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2003թ.	60,000	50,500	9,500	-	-	11,027	20,527
Կանոնադրական կապիտալի համալրում	-	(50,500)	50,500	-	-	-	50,500
Ժամանակաշրջանի գուտ շահույթ	-	-	-	-	-	162,980	162,980
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2004թ.	60,000	-	60,000	-	-	174,007	234,007
Կանոնադրական կապիտալի ավելացում	543,840	-	543,840	-	-	-	543,840
Ժամանակաշրջանի գուտ շահույթ	-	-	-	-	-	299,683	299,683
Սեփական կապիտալի այլ տարրերի աճ (նվազում)	-	-	-	(41,809)	-	-	(41,809)
Ներքին շարժեր	-	-	-	173,974	-	(173,974)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2005թ.	603,840	-	603,840	132,165	-	299,716	1,035,721
Կանոնադրական կապիտալի նվազում (վերակազմակերպում)	(85,440)	-	(85,440)	-	-	-	(85,440)
Սեփական կապիտալի այլ տարրերի աճ (նվազում) (վերակազմակերպում)	-	-	-	-	-	(84,609)	(84,609)
Շահաբաժինների վճարում	-	-	-	-	-	(215,107)	(215,107)
Ժամանակաշրջանի գուտ շահույթ	-	-	-	-	-	385,026	385,026
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2006թ.	518,400	-	518,400	132,165	-	385,026	1,035,591

ՎԱԼԼԵՏՍԱ ՄՊԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2006թ., 2005թ. և 2004թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

հաշվեկալված տարիների համար

	Հազար դրամ				
	Գումար	դրամարկղ		բանկային հաշիվներ	
		դրամ	արտար ժույթ	դրամ	արտար ժույթ
Դրամական միջոցների մնացորդը 01 հունվարի 2004թ. դրությամբ	18,229	-	-	9,755	8,474
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Արտադրանքի, սպրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից	4,499,287	4,247,155	14,831	199,866	37,435
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	3,290	-	-	-	3,290
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	4,502,577	4,247,155	14,831	199,866	40,725
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Նյութերի, սպրանքների ձեռք բերման գծով	3,267,788	401,114	-	58,314	2,808,360
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	188,814	70,844	-	73,253	44,717
Վճարումներ աշխատակիցներին և նրանց ամունից	13,276	12,637	-	639	-
Վճարումներ բյուջե	1,164,724	39,398	-	1,125,326	-
Վճարումներ սոցիալական սպահովագրության հիմնադրամ	4,328	-	-	4,328	-
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	15,790	14,589	-	1,201	-
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	4,654,720	538,582	-	1,263,061	2,853,077
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(152,143)	3,708,573	14,831	(1,063,195)	(2,812,352)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	250	250	-	-	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	250	250	-	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր					

Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	326,857	17,753	-	3,031	306,073
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(326,607)	(17,503)	-	(3,031)	(306,073)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	50,500	-	-	50,500	-
Ստացված վարկերից և փոխառություններից	3,669,760	969,137	1,192,559	11,347	1,496,717
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	3,720,260	969,137	1,192,559	61,847	1,496,717
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	3,039,980	2,063,170	-	-	976,810
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	7,202	-	-	-	7,202
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	3,047,182	2,063,170	-	-	984,012
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	673,078	(1,094,033)	1,192,559	61,847	512,705
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	194,328	2,597,037	1,207,390	(1,004,379)	(2,605,720)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(207,587)	-	(217,724)	-	10,137
Ներքին շարժեր	-	(2,593,750)	(988,939)	994,632	2,588,057
Գրամական միջոցների մնացորդը 31 դեկտեմբերի 2004թ. դրությամբ	4,970	3,287	727	8	948
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Արտադրանքի, սպրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից	4,381,656	4,075,808	16,307	289,541	-
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	26,160	-	-	26,160	-
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	4,407,816	4,075,808	16,307	315,701	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Նյութերի, սպրանքների ձեռք բերման գծով	3,737,105	11,374	-	155,877	3,569,854
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	125,608	26,160	-	94,874	4,574
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	119,107	114,449	-	4,658	-
Վճարումներ բյուջե	1,449,184	353,743	-	1,095,441	-
Վճարումներ սոցիալական սպահովագրության հիմնադրամ	26,320	-	-	26,320	-

Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	313,619	285,687	-	12,518	15,414
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	5,770,943	791,413	-	1,389,688	3,589,842
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,363,127)	3,284,395	16,307	(1,073,987)	(3,589,842)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	532,995	3,000	-	529,995	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	532,995	3,000	-	529,995	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	91,920	2,139	427	42,693	46,661
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	46,100	-	-	46,100	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	138,020	2,139	427	88,793	46,661
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	394,975	861	(427)	441,202	(46,661)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	500,654	-	-	-	500,654
Ստացված վարկերից և փոխառություններից	4,735,440	133,200	1,731,226	46,100	2,824,914
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	5,236,094	133,200	1,731,226	46,100	3,325,568
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	3,825,812	1,836,748	12,197	15,326	1,961,541
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	145,275	1,354	-	30,027	113,894
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	3,971,087	1,838,102	12,197	45,353	2,075,435
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	1,265,007	(1,704,902)	1,719,029	747	1,250,133
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	296,855	1,580,354	1,734,909	(632,038)	(2,386,370)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ**	(245,450)	-	(248,642)	-	3,192
Ներքին շարժեր	-	(1,567,733)	(1,458,112)	643,535	2,382,310

Գրամական միջոցների մնացորդը 31 դեկտեմբերի 2005թ. դրությամբ	56,375	15,908	28,882	11,505	80
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Արտադրանքի, սպրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից	4,883,046	3,665,559	-	1,217,487	-
Գործառնական այլ գործունեությունից, այդ թվում՝	37,636	16,195	13,464	1,010	6,967
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	4,920,682	3,681,754	13,464	1,218,497	6,967
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Նյութերի, սպրանքների ձեռք բերման գծով	2,308,704	13,236	-	267,842	2,027,626
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	154,094	17,968	-	132,316	3,810
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	137,895	137,895	-	-	-
Վճարումներ բյուջե	1,184,338	66,281	-	1,118,057	-
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	35,650	-	-	35,650	-
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	45,392	2,955	-	33,788	8,649
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	3,866,073	238,335	-	1,587,653	2,040,085
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	1,054,609	3,443,419	13,464	(369,156)	(2,033,118)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	642,462	2,058	-	640,404	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	642,462	2,058	-	640,404	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	221,883	300	-	63,944	157,639
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից, փոխառությունների տրամադրումից	371,500	371,500	-	-	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	593,383	371,800	-	63,944	157,639
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	49,079	(369,742)	-	576,460	(157,639)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր					
Ստացված վարկերից և փոխառություններից	2,044,497	13,300	-	222,500	1,808,697

Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	2,044,497	13,300	-	222,500	1,808,697
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր					
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	1,747,646	-	-	117,420	1,630,226
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	226,626	-	-	217,356	9,270
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	1,974,272	-	-	334,776	1,639,496
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	70,225	13,300	-	(112,276)	169,201
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	1,173,913	3,086,977	13,464	95,028	(2,021,556)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(849,043)	-	(850,525)	-	1,482
Ներքին շարժեր	-	(2,859,751)	942,592	(103,180)	2,020,339
Դրամական միջոցների մնացորդը 31 դեկտեմբերի 2006թ. դրությամբ	381,245	243,134	134,413	3,353	345

Վալլետտա ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2006թ., 2005թ. և 2004թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ

հաշվեփակված տարիների համար

1 Ընդհանուր տեղեկություններ

«Վալլետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2003թ. դեկտեմբերի 12-ին: «Միջնավան» և «Վալլետտա» ընկերությունների մասնակիցների 29.12.2003թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «Միջնավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միացում Ընկերությանը, «Մաթինե Պողոսյան» և «Վալլետտա» ընկերությունների մասնակիցների 23.05.2005թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «Մաթինե Պողոսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միացում Ընկերությանը:

2006թ. մարտի 3-ին «Վալլետտա» ՍՊԸ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ «Վալլետտա» ՍՊԸ-ն վերակազմակերպվել է՝ նրանից առանձնացմամբ ստեղծվելով նոր «Մազնետիկ» ՍՊԸ:

Ընկերությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ունի մասնաճյուղ, որտեղ կատարվում է սուրճի վերամշակումը:

Ընկերությունը իրավաբանական անձ հանդիսացող օտարերկրյա ներդրումներով առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնեմասերի կանոնադրությամբ սահմանված հետևյալ չափերով.

	<u>2006թ.</u>	<u>2005թ.</u>	<u>2004թ.</u>
1. Հենրիկ Զախարյանց	39,120	124,560	38,580
2. «Սլինդոր Վենչըրս Լիմիթեդ» ընկ. (Բրիտանական Վիրջինյան կղզիներ)	479,280	479,280	21,420
Ընդամենը	518,400	603,840	60,000

Ընկերությունը գտնվում է ք. Երևան, Աերացիա 1 հասցեում:

Ընկերության գործունեության իրականացման վայրերն ըստ գործունեության տեսակների հետևյալն են.

1. «Պրեմիեր» սուրճի արտադրություն, փաթեթավորում, «Շերրի» թեյի արտադրություն, փաթեթավորում, «Բիելլա» մսամթերքի արտադրություն - ք. Երևան, Աերացիա 1,
2. «Էս Էֆ Սի» հասարակական սնունդ - ք. Երևան, Տիգրան Մեծի 12, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 21, ք. Երևան, Իսահակյան 14,
3. Սեփական արտադրանքի և ներմուծված սննդի մանրամեծածախ առևտուր - ք. Երևան, «Մուրմալու» տոնավաճառ
4. «Կոմֆորտ» կենցաղային սարքավորումների մանրածախ վաճառք - ք. Երևան, Մաշտոցի 8, ք. Երևան, Ամիրյան 8, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 21,
5. Արտարժույթի փոխանակման կետեր - ք. Երևան, Տիգրան Մեծի 37, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 21:

2 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների (այսուհետ՝ ՀՀՀՀՍ) պահանջներին համապատասխան: ՀՀՀՀՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ենթադրում է որոշակի հաշվապահական գնահատումների կիրառում: Բացի այդ, ՀՀՀՀՍ -ները պահանջում են, որ Ընկերության ղեկավարությունն իարկանացնի դատողություններ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառելիս:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Հաշվետվական արժույթը

Ընկերության հաշվետվական արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ):

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Անընդհատություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքից ելնելով, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որևէ ճշգրտում, որը կպահանջվեր Ընկերության անընդհատ գործելու անկարողության դեպքում:

2.5 Գնահատումներ և դատողություններ

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և դատողություններ, մասնավորապես՝ հիմնական միջոցների օգտակար ծառայությունները, դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարները, ֆինանսական ակտիվների իրական արժեքները որոշելիս և այլն: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3 Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման սույն քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1 Հիմնական միջոցներ

3.1.1 Չափման հիմունքը

Մեփական հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Գնված հիմնական միջոցների սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, դրա հետ կապված լրացուցիչ ծախսումները, տեղափոխման, տեղակայման և աշխատանքային վիճակի բերելու հետ կապված այլ ծախսերը:

Մեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և աշխատուժի ծախսումները, ինչպես նաև արտադրական վերադիր ծախսումների համապատասխան մասը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են ինքնարժեքով:

Այն դեպքերում, երբ հիմնական միջոցների տվյալ միավորը կազմող բաղկացուցիչները բավականաչափ էական են և ունեն տարբեր օգտակար ծառայության ժամկետներ կամ Ընկերությանը օգուտ են բերում տարբեր կերպով, դրանք ճանաչվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների սկզբնական արժեքը դրանց սկզբնական ճանաչման պահին իրական արժեքն է՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների չափման հետ կապված մնացած մոտեցումները նույնն են, ինչ սեփական հիմնական միջոցներին:

3.1.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա կատարված հետագա ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին, եթե դրանք կատարվում են ապագա տնտեսական օգուտները վերականգնելու կամ պահպանելու նպատակով: Դրանք կապիտալացվում են այն դեպքում, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտներն ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն:

3.1.3 Մաշվածություն

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Օգտակար ծառայության գնահատված միջին ժամկետները հետևյալն են՝

- Շենքեր 20 տարի
- Մեքենաներ և սարքավորումներ 5 տարի
- Տրանսպորտային միջոցներ 5 տարի
- Համակարգչային տեխնիկա 1 տարի
- Արտադրական, տնտեսական գույք 5 տարի
- Այլ հիմնական միջոցներ 3-5 տարի

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Գնված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, դրա հետ կապված լրացուցիչ ծախսումները (չփոխհատուցվող հարկեր, տուրքեր, փորձաքննություն և այլն) և աշխատանքային վիճակի բերելու հետ կապված այլ ծախսերը:

Բոլոր ոչ նյութական ակտիվները համարվում են սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող և ամորտիզացվում են գնահատված օգտակար ծառայության ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված միջին ժամկետները հետևյալն են՝

- Համակարգչային ծրագրեր 5 տարի
- Հեղինակային իրավունքներ 10 տարի

3.3 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և իրացման գուտ արժեքի նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջինը մուտք՝ առաջինը ելք (ՖԻՖՈ) բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

3.4 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները (անհավաքելիության պահուստը): Դեբիտորական պարտքերի անհավաքելիության պահուստ ստեղծվում է, երբ առկա է օբյեկտիվ վկայություն, որ ընկերությունն իր վիճակի չի լինի ժամանակին հավաքել բոլոր գումարները դեբիտորական պարտքի առաջացման սկզբնական պայմաններին համապատասխան: Որպես դեբիտորական պարտքի հնարավոր արժեզրկման հայտանիշներ են ընդունվում դեբիտորի նշանակալի ֆինանսական դժվարությունները, նրա սննկացման մեծ հավանականությունը, վճարումների ուշացումը ավելի քան երկու ամսով: Պահուստի մեծությունը որոշվում է որպես ակտիվի ընթացիկ հաշվեկշռային արժեքի և դրա գծով ակնկալվող ապագա դրամական ներհոսքերի ներկա արժեքի տարբերություն: Անհավաքագրելի դեբիտորական պարտքը դուրս է գրվում պահուստի հաշվին: Պահուստի ստեղծումը, դրա փոփոխությունները, ինչպես նաև նախկինում դուրս գրված գումարների հետագա վճարումները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ իրացման ծախսերի կազմում:

3.5 Արտարժույթային գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով արտահայտված գործարքները փոխարկվում են հաշվետվական արժույթի՝ գործարքի օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված գործարքների մարումից, ինչպես նաև

արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների տարեվերջյան մնացորդների վերագնահատումից առաջացած եկամուտներն ու ծախսերը (փոխարժեքային տարբերություններ) ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամարկղի դրամական միջոցները և ցպահանջ ավանդները: Բանկային ցպահանջ օվերդրաֆտները, որոնք կազմում են Ընկերության դրամական միջոցների կառավարման համակարգի անբաժանելի մասը, ներառված են որպես դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլելու նպատակով: Արտարժույթային դրամական հոսքերը դրամական հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլվում են գործարքի օրվա փոխարժեքով:

3.7 Արժեզրկում

Ընկերության ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվների փոխհատուցվող գումարները:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Վերագնահատված հիմնական միջոցների գծով արժեզրկումից բոլոր կորուստները ճանաչվում են նույն կերպ, ինչ վերագնահատումները: Արժեզրկումից այլ կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.7.1 Փոխհատուցվող գումարի հաշվարկ

Ընկերության մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների և դեբիտորական պարտքերի փոխհատուցվող գումարը հաշվարկվում է ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքով՝ զեղչված ակտիվին բնորոշ սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերը չեն զեղչվում:

Մյուս ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը, օգտագործելով հարկումից առաջ զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը:

3.7.2 Արժեզրկումից կորուստների հակադարձում

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Այլ ակտիվների գծով արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործված գնահատականները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ համապատասխան մաշվածություն կամ ամորտիզացիա հաշվարկելուց հետո, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.8 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները ներառում են.

- Բանկային օվերդրաֆտների, կարճաժամկետ և երկարաժամկետ փոխառությունների դիմաց հաշվեզրված տոկոսները,
- Փոխառությունների գեղչերի կամ հավելավճարների ամորտիզացիան,
- Փոխառությունների ստացման հետ կապված օժանդակ ծախսումները,
- Ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարները (տոկոսները)՝ ճանաչված համաձայն ՀՀՄՄ 17 «Վարձակալություն» ստանդարտի,
- Արտարժույթի փոխանակման փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից՝ պայմանով, որ դրանք դիտվում են որպես տոկոսների վճարման ծախսումների ճշգրտում:

Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

3.9 Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները ներկայացվում են ամորտիզացված արժեքով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլելով սկզբնական արժեքի և մարման ենթակա գումարի տարբերությունը, որը հաշվարկվել է փոխառության ժամկետի ընթացքում կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը:

Արտարժույթային փոխառությունների հաշվառումն ամորտիզացված արժեքով իրականացվում է փոխառության արժույթով՝ համապատասխան արտարժույթային արդյունավետ տոկոսադրույքով: Արտարժույթային փոխառությունները ներկայացման նպատակով վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ներկայացման ամսաթվի փոխարժեքով: Ամորտիզացիան (փոխառության գծով տոկոսային ծախսը) հաշվարկվում է արտարժույթով և վերահաշվարկվում է ՀՀ դրամով՝ միջին փոխարժեքով: Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ժամանակաշրջանի գուտ շահույթում (վնասում):

Փոխառության ծախսումները ճանաչվում են ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում:

3.10 Աշխատակիցների հատուցումներ

3.10.1 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (վճարովի տարեկան արձակուրդները, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները և այլն), և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է որպես`

ա) պարտավորություն` արդեն վճարված գումարները հանելուց հետո,և

բ) ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուցումների գումարը ներառվում է մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

3.10.2 Սահմանված մասհանումների պլաններ

Ընկերությունը հետաշխատանքային հատուցումների նպատակով ֆիքսված մասհանումներ է կատարում սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, որով սահմանափակվում են Ընկերության պարտավորությունները հետաշխատանքային հատուցումների գծով: Ընկերությունը չունի պարտականություն` կատարելու հետագա մասհանումներ, եթե հիմնադրամը չունենա բավարար ակտիվներ, որպեսզի վճարի աշխատակիցների բոլոր հատուցումները` կապված ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջաններում աշխատակցի ծառայության հետ:

Երբ աշխատակիցը ժամանակաշրջանի ընթացքում ծառայություն է մատուցում Ընկերությանը, Ընկերությունը այդ ծառայության դիմաց սահմանված մասհանումների պլանին մասհանումը ճանաչում է որպես`

ա) պարտավորություն` արդեն վճարված մասհանումները հանելուց հետո, և

բ) ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուցումների գումարը ներառվում է մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

3.11 Պահուստներ

Հաշվապահական հաշվեկշռում պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն` որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք:

Պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Պահուստի լավագույն գնահատականը որոշելիս հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից կներկայացնի այն ծախսումների ներկա (գեղջված) արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը այն դրույքն է` առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որը արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

3.12 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով:

3.13 Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարն առաջանում է այնպիսի գործարքներից կամ իրադարձություններից, որոնք նույն

կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում են սեփական կապիտալում: Նման դեպքերում հարկն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.14 Հասույթ

Հասույթն իրենից ներկայացնում է Ընկերության կողմից իր սովորական գործունեության ընթացքում վաճառված ապրանքների և արտադրանքի դիմաց ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը: Ապրանքների և արտադրանքի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը, Ընկերությունն այլևս չի մասնակցում վաճառված ապրանքի կառավարմանը և չի իրականացնում վաճառված ապրանքի նկատմամբ վերահսկողություն, հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը, հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված և կատարվելիք ծախսերը: Ապրանքների մանրածախ վաճառքից հասույթը ճանաչվում է ապրանքը գնորդին հանձնելու պահին: Մանրածախ վաճառքի դեպքում վճարումը կատարվում է կանխիկ կամ կրեդիտային քարտերի միջոցով:

3.15 Շնորհներ

Շնորհները ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Ակտիվներին վերաբերող շնորհները հաշվեկշռում ներկայացվում են ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում որպես հետաձգված եկամուտ, իսկ եկամուտներին վերաբերող շնորհները՝ ընթացիկ պարտավորությունների կազմում: Շնորհները եկամուտ են ճանաչվում այն ժամանակաշրջաններում, երբ որ ճանաչվում է համապատասխան ծախսը: Ակտիվներին վերաբերող շնորհները եկամուտ են ճանաչվում համապատասխան ակտիվների մաշվածությանը (ամորտիզացիային) համամասնորեն: Արդեն իսկ կրած ծախսերի կամ վնասների փոխհատուցման նպատակով ստացված շնորհները եկամուտ են ճանաչվում անմիջապես, երբ որ դառնում են ստացման ենթակա: Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են ոչ գործառնական եկամուտների կազմում, իսկ եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտները՝ այլ գործառնական եկամուտների կազմում: Դրամական միջոցներով ստացված շնորհները դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլվում են գործառնական գործունեությունից առաջացած գուտ դրամական ներհոսքերի կազմում:

3.16 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության ազդեցությունը ներկայացվում է չբաշխված շահույթի սկզբնական մնացորդում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է:

4. Հիմնական միջոցներ

	Հազար դրամ						
Շենքեր	Մեքենա- սարքա- վորումներ, համակար գիչներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրա- տնտեսա կան գույք	Այլ հիմնա կան միջոցներ	Շահա- գործման մեջ չգտնվող	Ընդամենը	
Սկզբնական արժեք							
Առ 01 հունվարի 2004թ	-	19,061	58,847	8,796	1,563	-	88,267
Ավելացումներ	-	1,324	5,065	1,007	1,698	9,281	18,375
Պակասեցումներ	-	-	(500)	-	-	(8,726)	(9,226)
Առ 31 դեկտեմբերի 2004թ	-	20,385	63,412	9,803	3,261	555	97,416
Ավելացումներ	53,531	21,397	39,020	625	9,384	46,759	170,716
Պակասեցումներ	(2,698)	-	(2,914)	-	-	(47,314)	(52,926)
Առ 31 դեկտեմբերի 2005թ	50,833	41,782	99,518	10,428	12,645	-	215,206
Ավելացումներ	479,890	34,726	26,975	525	11,537	37,657	591,310
Պակասեցումներ	(530,723)	-	(9,422)	-	(13,998)	(37,657)	(591,800)
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	-	76,508	117,071	10,953	10,184	-	214,716
Մաշվածություն							
Առ 31 դեկտեմբերի 2003թ	-	2,362	3,221	1,028	164	-	6,775
Տարվա համար հաշվարկված մաշվածությունը	-	2,026	11,674	1,716	399	-	15,815
Տարվա ընթացքում դուրս գրված մաշվածությունը	-	-	(149)	-	-	-	(149)
Առ 31 դեկտեմբերի 2004թ	-	4,388	14,746	2,744	563	-	22,441
Տարվա համար հաշվարկված մաշվածությունը	212	2,684	13,500	1,815	1,671	-	19,882
Տարվա ընթացքում դուրս գրված մաշվածությունը	-	-	(994)	-	-	-	(994)
Առ 31 դեկտեմբերի 2005թ	212	7,072	27,252	4,559	2,234	-	41,329
Տարվա համար հաշվարկված մաշվածությունը	734	5,851	19,474	2,241	2,466	-	30,766
Տարվա ընթացքում դուրս գրված մաշվածությունը	(946)	-	(4,484)	-	(1,806)	-	(7,236)
Առ 31 դեկտեմբերի 2006թ	-	12,923	42,242	6,800	2,894	-	64,859
Զուտ հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2006թ	-	63,585	74,829	4,153	7,290	-	149,857
Առ 31 դեկտեմբերի 2005թ	50,621	34,710	72,266	5,869	10,411	-	173,877
Առ 31 դեկտեմբերի 2004թ	-	15,997	48,666	7,059	2,698	555	74,975

5. Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ

	Սկզբնական արժեք	Կուտակված ամորտիզացիա	Հազար դրամ Հաշվեկշռային արժեք
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	-	-	-
Ավելացում ձեռքբերումից	67,336	-	-
Հաշվարկված ամորտիզացիա 2005թ. համար	-	11,220	-
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	67,336	11,220	56,116
Ավելացում ձեռքբերումից	55,262	-	-
Հաշվարկված ամորտիզացիա 2006թ. համար	-	23,592	-
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	122,598	34,812	87,786

6. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Հեղինակային իրավունքներ	Հազար դրամ Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
Առ 01 հունվարի 2004թ.	48	-	48
Ավելացում	1,785	427	2,212
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	1,833	427	2,260
Ավելացում	-	1,117	1,117
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	1,833	1,544	3,377
Ավելացում	-	300	300
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	1,833	1,844	3,677
<i>Ամորտիզացիա</i>			
Առ 1 հունվարի 2004թ.	-	-	-
Հաշվարկված ամորտիզացիա	94	15	109
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	94	15	109
Հաշվարկված ամորտիզացիա	362	72	434
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	456	87	543
Հաշվարկված ամորտիզացիա	372	166	538
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	828	253	1,081
<i>Զուտ հաշվեկշռային արժեք</i>			
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	1,005	1,591	2,596
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	1,377	1,457	2,834
Առ 31 դեկտեմբերի 2004թ.	1,739	412	2,151

7. Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով

	Հազար դրամ		
	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Առևտրական դեբիտորական պարտքեր	78,096	33,487	38,917
Դեբիտորական պարտքեր հիմնական միջոցների վաճառքների գծով	513,332	207,014	533,009
	<u>591,428</u>	<u>240,501</u>	<u>571,926</u>

8. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով

	Հազար դրամ		
	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով	92	92	-
Դեբիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով	150,215	139,438	146,787
Դեբիտորական պարտքեր այլ հարկատեսակների գծով	4,258	-	5,131
	<u>154,565</u>	<u>139,530</u>	<u>151,918</u>

9. Այլ ընթացիկ ակտիվներ

	Հազար դրամ		
	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	1,119,415	574,141	-
Այլ ընթացիկ ակտիվներ	23,553	33,979	2,402
	<u>1,142,968</u>	<u>608,120</u>	<u>2,402</u>

10. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով

	Հազար դրամ		
	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Հումք, նյութերի գծով	768	408	27,628
Ապրանքների գծով	417,740	179,076	931,746
Ծառայությունների գծով	10,901	7,069	5,963
Հիմնական միջոցների գծով	99,250	61,000	-
Այլ գնումների գծով	765	766	3,735
	<u>529,424</u>	<u>248,319</u>	<u>969,072</u>

11. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին

	Հազար դրամ		
	<u>31.12.06թ.</u>	<u>31.12.05թ.</u>	<u>31.12.04թ.</u>
Շահութահարկի գծով	-	-	2,210
Եկամտահարկի գծով	-	633	-
Գույքահարկի գծով	325	423	302
Մաքսատուրքի գծով	3,684	5,215	-
Հաստատագրված վճարների գծով	-	1,144	-
Այլ հարկատեսակների գծով	4	105	300
	<u>4,013</u>	<u>7,520</u>	<u>2,812</u>

12. Եկամուտների ու ծախսերի վերլուծությունն ըստ բնույթի

	Հազար դրամ		
	<u>2006թ.</u>	<u>2005թ.</u>	<u>2004թ.</u>
Հասույթ	4,132,690	3,724,749	3,748,104
Գործառնական այլ եկամուտներ	22,514	3,511	4,959
Պատրաստի արտադրանքի և անավարտ արտադրության մնացորդների փոփոխություն	(477,079)	321,735	122,816
Օգտագործված հումք և նյութեր	(277,219)	(290,273)	(233,595)
Անձնակազմի գծով ծախսումներ	(186,581)	(161,884)	(19,129)
Մաշվածություն և ամորտիզացիա	(54,896)	(31,534)	(15,925)
Գործառնական այլ ծախսումներ և ծախսեր	(2,988,250)	(3,529,615)	(3,615,568)
Գործառնական շահույթ (վնաս)	<u>171,179</u>	<u>36,689</u>	<u>(8,338)</u>
Ոչ գործառնական գործունեությունից շահույթ	226,876	269,645	175,815
Մովորական գործունեությունից շահույթ	<u>398,055</u>	<u>306,334</u>	<u>167,477</u>
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-	-
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	<u>398,055</u>	<u>306,334</u>	<u>167,477</u>
Շահութահարկի գծով ծախս	(13,029)	(6,651)	(4,497)
Տարվա զուտ շահույթ	<u>385,026</u>	<u>299,683</u>	<u>162,980</u>

13. Այլ ոչ գործառնական գործունեությունից եկամուտ և ծախս

	Հազար դրամ		
	<u>Եկամուտ</u>	<u>Ծախս</u>	<u>Արդյունք</u>
2004թ.			
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից)	208	351	(143)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	287,314	51,686	235,627
Ակտիվներին վերաբերող շնորհներից	4,552	-	4,552
Անհատույց տրված ակտիվների գծով	-	1,015	(1,014)
	<u>292,074</u>	<u>53,052</u>	<u>239,022</u>
2005թ.			
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից)	172,500	4,618	167,882
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	355,530	102,654	252,876
Ակտիվներին վերաբերող շնորհներից	3,803	-	3,803
Անհատույց տրված ակտիվների գծով	-	970	(970)
	<u>531,833</u>	<u>108,242</u>	<u>423,591</u>
2006թ.			
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքներից (օտարումներից)	790,650	746,991	43,659
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	481,532	53,173	428,359
Ակտիվներին վերաբերող շնորհներից	2,802	-	2,802
Անհատույց տրված ակտիվների գծով	-	2,715	(2,715)
Այլ ոչ գործառնական գործունեությունից	-	18,603	(18,603)
	<u>1,274,984</u>	<u>821,482</u>	<u>453,502</u>

14. Շահութահարկի գծով ծախս

Ընկերության գործունեության արդյունքում առաջացած հարկվող շահույթի նկատմամբ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված է 20% շահութահարկի դրույքաչափ (2005թ.- 20%, 2004թ.- 20%):

	Հազար դրամ		
	<u>2006թ.</u>	<u>2005թ.</u>	<u>2004թ.</u>
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	13,029	6,651	4,497
	<u>13,029</u>	<u>6,651</u>	<u>4,497</u>

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	Հազար դրամ					
	2006թ.	%	2005թ.	%	2004թ.	%
Շահույթ մինչև հարկումը	398,055		306,334		167,477	
Շահութահարկի հաշվարկ սահմանված (կիրառվող) հարկային դրույքով	79,611	20.0	61,267	20.0	33,495	20.0
Փոխարժեքային տարբերությունների հարկային հետևանք	(85,672)	(21,5)	(50,575)	(16,5)	(47,126)	(28,1)
Հարկային տույժ-տուգանքների հարկային հետևանք	8,528	2,1	6,516	2,1	4,282	2,6
Հաստատագրված վճարով հարկվող գործունեության հարկային հետևանք	(6,450)	(1,6)	(11,084)	(3,6)	(3,460)	(2,1)
Այլ չնվազեցվող/չհարկվող հոդվածների հարկային հետևանք, գուտ	17,012	4,2	527	0,1	17,306	10,3
Շահութահարկի գծով ծախսը և հարկի գործող (արդյունավետ) դրույքը	13,029	3,2	6,651	2,1	4,497	2,7

15. Ընդհատված գործառնություն

2006թ. հուլիսից Ընկերության կողմից «Սթար» սուպերմարկետների ցանցի շահագործումը փոխանցվել է «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին: Գործառնության ընդհատման հետ կապված՝ «Սթար» սուպերմարկետներում առկա ապրանքերը և նրա հետ կապված հիմնական միջոցները վաճառվել են «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին, իսկ սուպերմարկետների համար նախատեսված ֆինանսական վարձակալությամբ ստացված սարքավորումները վերջինիս են հանձնվել ենթավարձակալությամբ (ամսական վարձավճարը՝ 2,613 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ): Գործառնության ընդհատման արդյունքում մոտ 70 աշխատակից Ընկերությունից տեղափոխվել է «Սթար Դիվայդ» ՓԲԸ:

Ընդհատված գործառնությանը վերաբերող եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև գործառնության ընդհատման հետ կապված ակտիվների վաճառքից շահույթները (վնասները) ներկայացված են ստորև.

	Հազար դրամ		
	2006թ.	2005թ.	2004թ.
<u>Ընդհատված գործառնություններ</u>			
Հասույթներ	109,742	70,268	21,892
Վաճառքի ինքնարժեք	(59,425)	(40,314)	(13,774)
Համախառն շահույթ/(վնաս)	50,317	29,954	8,118
Այլ ծախսեր	(20,111)	(6,853)	(5,114)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	30,206	23,101	3,004
Շահութահարկի գծով ծախս	(3,500)	(2,600)	(600)
Ընդհատված գործառնության հիմնական միջոցների օտարումից շահույթ (վնաս) մինչև հարկումը	43,568	-	-
Ընդհատված գործառնության ապրանքների օտարումից շահույթ (վնաս) մինչև հարկումը	9,343	-	-
Ընդհատված գործառնության ակտիվների օտարումից շահութահարկ	(7,200)	-	-
Շահույթ (վնաս) ընդհատված գործառնություններից	72,417	20,501	2,404

16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

16.1 Բաժնետերերը

2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության բաժնետերերն են՝

1. «Սլինդոր Վենչըրս» ընկերությունը (Գրանցվել է Բրիտանական Վիրջինյան Կղզիներում 2004թ. դեկտեմբերի 29-ին) 92.454 %
2. ՀՀ քաղաքացի Հենրիկ Զախարյանցը 7.546 %:

16.2 Այլ կապակցված կողմերը

